+374 55 181119 info@arz.am

Պետական ծրագիր

Վանաձորի քիմիական կլաստեր

Նախագիծը նախատեսում է Վանաձորի քիմիական կոմբինատի հիման վրա քիմիական արտադրանքի արդյունաբերական կլաստերի ստեղծում: Արտադրության հիմնական պրոդուկտները **ազոտային պարարտանյութերն** են, որոնք բորսայական ապրանք են ու որոնց շուկան ցուցաբերում է կայուն աճ:

Առաջարկված արտադրական շղթան հնարավորություն է տալիս ընդլայնել կլաստերի արտադրանքի տեսականին. **ջրածին, կորունդներ, սիլիցիումի հիման վրա ստացված բյուրեղներ և արևային էներգիայի համար նախատեսված թիթեղներ:**

Նախնական պայմանավորվածությունների համաձայն նախագծի պարամետրեր.

- Նախագծի արժեքը՝ **$600 միլիոն**
- Իրականացումը՝ **3 տարի**
- Տարեկան հզորություն՝ **1 մլն տոննա**

Նախատեսվող գործարանները համապատասխանում են էկոլոգիական պահանջներին և դասակարգվում են՝ որպես կանաչ արտադրություն:

Պետական ծրագիր

Վանաձորի քիմիական կլաստեր

Կլաստերի ու նրա ենթակառուցվածքների ազդեցությունը քաղաքի կյանքի վրա միտված են **բարելավելու էկոլոգիական իրավիճակը:**

- Վանաձորն ունի իրեն Երևանի ու միջազգային նավահանգիստների հետ կապող երկաթուղի, որը կարող է ենթարկվել նորացման և ընդլայնման:
- Դեպի Վանաձոր կարող է մատակարարվել Սևանա լճի մերձակայքում արևային մարտկոցներով արտադրվող էլեկտրաէներգիան:

Պետական ծրագիր

Վանաձորի քիմիական կլաստեր

Նախագիծը ներառում է բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում ինչպես Վանաձորի բնակիչների, այնպես էլ այլ մասնագետների համար:

Նախագծի շուրջ իրականացվում են բանակցություններ անհրաժեշտ իրավասություն ունեցող ընկերությունների հետ: Նախագիծը պետք է ստանա պետական ծրագրի կարգավիճակ:



Ուղղություն 1.
Էլեկտրաէներգիան օգտագործվում է ջրի մոլեկուլները ջրածնի և թթվածնի բաժանելու համար (էլեկտրոլիզ):

Ուղղություն 2.
Բնական գազը վերածվում է ածխածնի օքսիդի և ջրածնի (պիրոլիզ): Օդը կրիոգեն կերպով բաժանվում է ազոտի և թթվածնի:

- **Փուլ 1.** օգտագործելով կատալիտիկ սինթեզի մեթոդը ազոտից և ջրածնից ստացվում է ամոնիակ:
- **Փուլ 2.** ամոնիակի օքսիդացման կատալիտիկ միջոցով ամոնիակից և թթվածնից ստացվում է ազոտական թթուն:
- **Փուլ 3A.** հավելման ռեակցիայի միջոցով ազոտական թթվից և ամոնիակից ստացվում է ամոնիակի սելիտրա:
- **Փուլ 3B.** կատալիտիկ մեթոդով ջրածնից, ազոտից և ածխածնից ստացվում է կարբամիդ: